ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1

Պետական աջակցության տրամադրման նպատակով սոցիալական պաշտպանության ոլորտում ծառայություններ մատուցող իրավաբանական կամ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող անձանց ընտրության համար 2020 թվականի դեկտեմբերի 15-ի N 209-Ա/1 հրամանով հաստատված մրցութային հանձնաժողովի բացման նիստի

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ք. Երևան, Կառավարական տուն 3, 334 սենյակ

24.08.2021թ. ժամը 17:00

Նիստին ներկա էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ ***Տաթևիկ Ստեփանյան***
/նախարարի տեղակալ/

Հանձնաժողովի անդամներ՝

Հ. Մուրադյան	Ամփոփ վերլուծությունների, մոնիթորինգի և գնահատման վարչության պետ
Ք. Հովհաննիսյան	Հավասար հնարավորությունների ապահովման վարչության պետ
Ա. Մկրտչյան	Ֆինանսական և հաշվապահական հաշվառման վարչության՝ բյուջետավորման բաժնի պետ
Ա. Հարությունյան	Ինտեգրված սոցիալական ծառայությունների բաժնի պետ
Դ. Դադալյան	Հրավիրված փորձագետ

Հանձնաժողովի քարտուղար՝ Սուսաննա Ավետիսյան
/գնումների համակարգման բաժնի մեթոդիստ/

Օրակարգ

1. Հայտերի բացում

Պետական աջակցության տրամադրման նպատակով սոցիալական պաշտպանության ոլորտում ծառայություններ մատուցող իրավաբանական կամ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող անձանց ընտրության համար մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) բացման նիստը կայացավ ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշմամբ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամանով 2020 թվականի դեկտեմբերի 14-ի N 208-Ա/1 հրամանով և հրավերով սահմանված պահանջներին համապատասխան: Բացման նիստը վարեց հանձնաժողովի նախագահ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Տ. Ստեփանյանը:

ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշման, 28-րդ կետի համաձայն ***հանձնաժողովի նիստը դռնփակ էր:***

Հայտերի բացման նիստում՝ նախագահը նիստը հայտարարեց բացված, քարտուղարը՝ նախագահին փոխանցեց թվով 1 մրցույթի հայտ: Հանձնաժողովի անդամների կողմից սկսվեց հայտերի բացումը և փաստաթղթերի առկայության ստուգումը:

Ծրագրի անվանում	Մասնակիցների անվանում	Հասցե	Հրավերի պահանջների համապատասխանություն	Պահանջվող փաստաթղթերի առկայություն	Փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին	Ֆինանսական նախահաշվի արժեքը (ՀՀ դրամ)
«Սոցիալական շտապօգնություն»	Հայ առաջադեմ երիտասարդություն ՀԿ	0019, ՀՀ ք.Երևան Բաղրամյան 45, բնկ. 3բ	Կազմակերպության կողմից ներկայացված հայտը, փաստաթղթերի ձևաչափերը պահպանված են և համապատասխանում է հրավերի պահանջներին	Առկա են՝ ՁԵՎ N 1 ՁԵՎ N 2 ՁԵՎ N 3 ՁԵՎ N 4 ՁԵՎ N 5 ՁԵՎ N 6 Կազմ.գրանցման վկայականի պատճեն Ընդամենը՝ 14 էջ	Կազմակերպության կողմից ներկայացված հայտում փաստաթղթերը կազմված են հրավերի պահանջներին համապատասխան	1.850.000

Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին տեղեկատվությունը բացակայում է:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշման 28.1 կետի պահանջներով՝ հայտերի բացման նիստի ժամանակ պարզ դարձավ, որ ***«Սոցիալական շտապօգնություն»*** ծրագրով դրամաշնորհի մրցույթի գնահատող հանձնաժողովի անդամները, հրավիրված փորձագետը և հանձնաժողովի քարտուղարը չունեն շահերի բախում տվյալ ընթացակարգի շրջանակներում:

Հանձնաժողովը որոշեց.

Հայտերի բովանդակության ուսումնասիրության և գնահատման նիստ հրավիրել 25.08.2021 թվականին, ժամը 11:00-ին:

Հանձնաժողովի նախագահ՝ ..... Տ. Ստեփանյան

Հանձնաժողովի անդամներ՝
Հ. Մուրադյան .....
Ք. Հովհաննիսյան .....
Ա. Մկրտչյան .....
Դ. Դադալյան .....

Հանձնաժողովի քարտուղար՝ ..... Ս. Ավետիսյան

24.08.2021թ.